ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan @mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 օգոստոսի 2012 թվականի № 144 – Ա

ք. Բյուրեղավան

ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱԶԳԵՆ Ա ՎԵՀԱՓԱՌԻ ՓՈՂՈՑ 15/42 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16–րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 20-րդ կետի գ) ենթակետով և 21-րդ կետով՝ **ավագանին որոշում է.**

1. Քաղաքացի Գևորգ Հովակիմյանին սեփականության իրավունքով պատկանող Բյուրեղավան քաղաքի Վազգեն Ա Վեհափառի փողոց 15/41 հասցեի 34.3քմ. հողամասի և խանութի ընդլայնման նպատակով Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող (վկայական N20072012-07-0254 տրված 2012 թվականի հուլիսի 20-ին) Բյուրեղավան քաղաքի Վազգեն Ա Վեհափառի փողոց 15/42 հասցեի 26.08քմ. հասարակակն կառուցապատման հողամասն ուղղակի վաճառքով օտարել Բյուրեղավան քաղաքի թիվ 31 շենքի 25 բնակարանի բնակիչ Գևորգ Հովակիմյանին որպես սեփականություն գործող կադաստրային գնահատման արժեքով՝ 76675 (յոթանասունվեց հազար վեց հարյուր յոթանասունհինգ) դրամով, քանի որ նշված հողամասը չի կարող օտարվել որպես առանձին միավոր:

2. Նշված գույքը դուրս գրել Բյուրեղավանի քաղաքային համայնքի հաշվեկշռից:

3. Պայմանագրի վավերացման և գրանցման ծախսերը թողնել Գևորգ Հովակիմյանի վրա:

Կողմ (7) **Դեմ (0)** **Ձեռնպա**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ____________

ՀԱՅԿԱԶ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ____________

ԱՎԱԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ ____________

ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ____________

ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ____________

ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________

ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ